ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Տարեցտարի հայ դրամագիտության զարգացման կարևորությունը դառնում է անհրաժեշտ: Համաշխարհային դրամագիտական մտքի պատմության մեջ խաչատուր Արտաշեսի Մուշեղյանի /1919-1992/ արժանահիշատակ անունն ու ավանդը տարեցտարի ավելի ու ավելի են արժևորվում: Ավանդույթներով ու մշակույթով հարուստ Գյումրին է եղել Խ. Մուշեղյանի ծննդավայրը: Վիրաբույժի ընտանիքում է կազմավորվել նա՝ որպես անհատականություն: Դժվարին ուղի է անցել մինչև գիտական բարձունքները: Մասնագիտական կրթությունը ստանալով Սանկտ-Պետերբուրգում՝ Էրմիտաժի դրամագիտության բաժնում, ռուս դրամագետների ղեկավարությամբ փայլուն պաշտպանելով իր գիտական թեզը՝ վերադառնում է Հայրենիք և ղեկավարում Հայաստանի պատմության պետական թանգարանի դրամագիտության բաժինը:

Նրա ուսումնասիրությունների շնորհիվ հրապարակ են գալիս մի շարք արժեքավոր աշխատություններ, որոնք և հիմք են դառնում հայ դրամագիտական մտքի զարգացմանը: Գիտական հիմնավոր դպրոց անցնելով Էրմիտաժի դրամագիտության բաժնում, ոգեշնչված Ն.Մառի, Լեոյի, Հ.Օրբելու աշխատություններով՝ Խ. Մուշեղյանը խորապես գիտակցում էր հայ դրամագիտության զարգացման կարևորությունը պատմության խրթին հարցերի լուսաբանման խնդրում:

Բացառիկ աշխատասիրությունը, հիմնավոր ու խոր գիտելիքները, մասնավորապես արաբերեն լեզվին /քուֆի գրելաոճին/ տիրապետելը հիմք ծառայեցին Մուշեղյանի ընդգրկուն գիտական ժառանգության համար: Երևանում ծավալած իր գործունեության առաջին իսկ տարիներին /չնայած շատ դրամագետներ աշխատում էին միայն դրամների պատկերատիպերի վրա/ նա սկսեց դասակարգել Հայաստանի տարածքում հայտնաբերված դրամներն ու դրամական գանձերը: Ուսումնասիրությունները պահանջում էին կարդալ, հասկանալ ու դասակարգել հունարեն, լատիներեն, պահլավերեն, արաբերեն ու վրացերեն լեզուներով արձանագրված հին մետաղե դրամները: Եվ այս դժվարին աշխատանքն ամբողջովին կատարվել է անհրաժեշտ աղբյուրագիտական գրականության գրեթե բացակայության պայմաններում: Աշխարհի բազմաթիվ դրամագիտական կենտրոնների հետ կապերը հնարավորություն էին տալիս տեղեկություններ ու փաստեր հավաքել հայկական դրամների վերաբերյալ: Նրա աշխատությունները, որոնք հարստացրեցին հայագիտության ոսկե ֆոնդը, բացահայտեցին Հայաստանի պատմությանն առնչվող բազմաթիվ մթին հարցեր:

1962թ. Գիտությունների ակադեմիան հրատարակեց Խ. Մուշեղյանի «Դրամական շրջանառությունը Դվինում, դրամագիտական տվյալներով» անդրանիկ գիրքը: Ուսումնասիրությունը հիմնված էր V – XII դարերն ընդգրկող դրամական գտածոների վրա, հատկապես վերաբերում էր Դվին քաղաքի

դրամաշրջանառությանը: Մենագրությունը բարձր գնահատականի արժանացավ գիտական շրջանակներում: Հեղինակի արխիվում գտնում ենք գրքի կարևորությունը հավաստող հետևյալ խոսքերը. «Խաչատուր Մուշեղյանի դիտողություններն ու եզրակացությունները, զարգացած Դվինի դրամագլուխերով. թե հաջող են, և թե ուշիմորեն կատարված: Անտարակույս, նպաստ մըն է մեր չգրված ազգային և համաշխարհային առևտրի պատմության համար »[1]:

Իսկ Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Ռոջերսը Մուշեղյանին հղած նամակում գրում է. «Ես պետք է շնորհակալություն հայտնեմ Ձեզ Ձեր գրքի համար: Դրամագիտությունը բանալի եղավ պարզելու պատմական բնույթի շատ հարցեր: Եվ Ձեր մտքերը բոլորովին նոր, ինքնատիպ լույս սփռեցին իմ հետազոտությունների վրա: Դրա համար պարտական եմ միայն Ձեզ »[2]:

1973թ. լույս տեսավ «Հայաստանի դրամական գանձերը» գրքի Ա հատորը՝ ռուսերեն և անգլերեն ամփոփագրով, որը Սառնակունք գյուղում / Սյունիքի մարզ / գտնված գանձի մասին մանրակրկիտ, ընդգրկուն ուսումնասիրություն է: Այս գիրքը հելլենիստական, հռոմեական ու պարթևական աշխարհի հետ Հայաստանի հարաբերություններն ըմբռնելու համար կարևորագույն աշխատություններից մեկն է: Նշված գտածոն Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված ամենահարուստ ու հին գանձն է: Քննության են առնված գանձի հայտնաբերման հանգամանքները, դրամների տվյալները, պատկերագրությունը, հելլենիզմի ժամանակաշրջանի դրամակշռային համակարգերն ու հռոմեական դրամների դասակարգման սկզբունքները, դրամների լատինատառ համառոտագրություններն ու հունատառ սկզբունքով արված մենագրերը, Հայաստանի քաղաքական վիճակը՝ գանձի ստեղծման ու թաղման տարիներին՝ մ.թ.ա. 1 դարի վերջին: Խ. Մուշեղյանը ստեղծել է նաև տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի տնտեսական կապերն ուրվագծող արժեքավոր մի քարտեզ: Հեղինակի կատարած աշխատանքի վիթխարի ծավալը ցույց տալու համար նշենք, որ միայն հռոմեական դրամների քննությամբ ի հայտ են բերվել 113 դիմաքանդակներ և 89 անձնանուններ, առանձնացված են Արտաշեսյան Հայաստանում տարածված դրամների բնորոշ խմբերը՝ սելևկյան, պարթևական, կապադովկիական, հռոմեական, փոքրասիական ու փյունիկյան միավորները: Այս ամենը կատարված է պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, բրիտանական, ֆրանսիական, ռուսական, գերմանական թանգարանների հարուստ փորձի ու սկզբունքների հիման վրա: Գիրքը, ըստ էության, Սառնակունքի գանձի օրինակելի կատալոգն է, որի գործնական նշանակությունը դժվար է գերագնահատել: Աշխարհի բոլոր դրամագետները, ովքեր զբաղվում են Հայաստանի պատմությամբ, այսպիսի գիտական կատալոգի կարիք պիտի որ զգան՝ հասկանալու համար Հայաստանի դրամական համակարգն ու դրամաշրջանառությունը: Նշված գիտական աշխատություններին զուգահեռ, Մուշեղյանը նաև բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Նրա ամեն մի հոդված կամ զեկուցում գիտական նստաշրջանում, նոր էջ էին բացում ու նոր հարց շոշափում հայ դրամագիտության մեջ՝ դրանով ավելի շտկելով և պարզաբանելով հայոց պատմության կարևորագույն վայրեր:

Խ.Մուշեղյանը առաջինն էր, որ ստեղծեց դրամագիտության դասախոսությունների շարքը պատմության ֆակուլտետների համար: Այդ ծրագիրը Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության, արևելագիտության

---

[1] Ց. Քյուրայան, Բազմավեպ, հ. ՃԻԲ (հուլիս-սեպտեմբեր), Վենետիկ, 1964, էջ 23:
[2] Անձնական արխիվ (նամակներ):

ամբիոնների կողմից խրախուսվեց. և գիտնականը 1966-ից մինչև իր կյանքի մայրամուտը դասախոսություններ էր կարդում Երևանի բուհերում:

Մեծ է նրա վաստակը նաև Մայր Աթոռի դրամագիտական հավաքածուի դասակարգման և գիտական հիմքերի վրա դնելու գործում: Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի հրավերով Խ. Մուշեղյանը աշխատեց Մայր Աթոռի թանգարանում: Մինչև օրս պահպանվում և ցուցադրվում են դրամագիտական նյութերը. որոնց անգնահատելի արժեքը կարևորվեց հեղինակի ուսումնասիրության շնորհիվ:

1983-ին դրամագետը հրապարակում է «Դրամական շրջանառությունը Հայաստանում» մենագրությունը. որը Հայաստանի դրամահատությանը վերաբերող մի նոր, ընդգրկուն ուսումնասիրություն է. ծանրակշիռ խոսք՝ անտիկ ժամանակներից մինչև զարգացած միջնադար Հայաստանում տարածված դրամների հիմնական տեսակների մասին: Հեղինակը դրամների տվյալների հիման վրա ցույց է տվել այն կարևոր իրադարձությունները. որոնք հայոց երկրում տեղի են ունեցել նախաքրիստոնեական ժամանակներից՝ մ.թ.ա. V - VI դդ.. սկսած մինչև մոնղոլական տիրապետության անկումը՝ XIVդ.: Աշխատությունը հստակ պատկերացում է տալիս Սասանյան և Արաբական խալիֆայության ժամանակներում թողարկված մետաղե դրամների ու դրամական գանձերի մասին: Ըստ արժանվույն գնահատելով գիրքը՝ ակադեմիկոս Սուրեն Երեմյանը գրում է. «Երկարամյա քրտնաջան աշխատանքի շնորհիվ հեղինակը տվել է մի աշխատություն. որ Հայագիտության Ոսկե ֆոնդն է մտնելու»[3]: Համանման կարծիքի է ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը. «Խաչատուր Մուշեղյանի գործն. ըստ էության. սկզբնավորում է գիտական մտքի շատ կարևոր ասպարեզներից մեկի՝ դրամագիտության զարգացումը Հայաստանում: Այն կարևոր է հայ-իրանական. հայ-արաբական. հայ-սելջուկյան ու հայ-մոնղոլական առնչությունների բացահայտման տեսակետից»[4]:

1979թ. Մխիթարյանները / Վիեննա / առանձին գրքույկով՝ հրատարակեցին դրամագետի գրչին պատկանող աշխատությունները՝ գիտակցելով այդ ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Հայտնի է, որ միջնադարյան մայրաքաղաք Անին միշտ եղել է հայագետների ուշադրության կենտրոնում: Այն եղել է նաև տարանցիկ առևտրի կենտրոն: Քաղաքի բազմադարյան հողը իր մեջ ներփակել է նաև դրամաշինական շատ գանձեր: Անիում 1892թ. կատարվեցին առաջին հնագիտական պեղումները: Հայտնաբերվեցին բազմաթիվ հին դրամներ և դրամական գանձեր: Այդ գանձերը արձանագրվեցին ռուս կովկասագետ Ե. Ա. Պաիտոմովի աշխատություններում, սակայն Անիի դրամների առաջին հիմնավոր ուսումնասիրությունը՝ գիտական խորը վերլուծություններով և եզրահանգումներով, կատարեց Մուշեղյանը: Նա հիշում էր իր խոստումը Հ. Օրբելուն, որ պետք է ուսումնասիրի Անիի դրամների ծագման և դրամական շրջանառության պատմությունը և ի վերջո իրագործեց տարիների իր երազանքը: 1984թ. Փարիզում ֆրանսերեն լույս տեսավ Անիի դրամների վերաբերյալ հոդվածը[6]: Ուսումնասիրությունը հրատարակվեց նրա մահվանից հետո միայն:

---

[3] Գրքերի աշխարհ, 22.V. 1983, N 5(176):

[4] Նույն տեղում:

[5] Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում սկզբից մինչև Ժ դար Հ.Ք.ի, Վիեննա, 1979:

6 Kh.A.Mouchegian, Bilan compare des decouvertes numismatiques a Ani et a Duin', Revue des Etudes Armenienes, 1984, p. 461-469.

Խ. Մուշեղյանի պրոպտուն միտքը անընդհատ որոնումների մեջ էր: Կյանքի վերջին տարիներին շարունակում էր աշխատել. գրում էր «Հայոց պատմության դրամագիտականը» և Այունիքի մարզում գտնված գանձի վերաբերյալ ուսումնասիրությունը: Հիվանդ վիճակում նա դասակարգեց և հրատարակեց այս գանձի մի մասը /1900-ից՝ 1200-ը/: Ցավոք, «Հայոց պատմության դրամագիտականը» աշխատությունը լույս տեսավ նրա մահվանից հինգ տարի հետո միայն /1997/:

1988-1992թթ.՝ երկրաշարժ, խավար ու ցուրտ, համատարած արտագաղթ, թալանված տնտեսություն... Ինչպես ամեն մի հայի, այնպես էլ Խ. Մուշեղյանի համար ծանր ժամանակահատված էր՝ թե առողջական վիճակի և թե աշխատանքները հրատարակելու առումով: Նա երազում էր տպագրված տեսնել բոլոր թղթապանակները, ուր հանգրվան էին գտել սեփական ուսումնասիրությունների արդյունքները:

Նկատի ունենալով Խ. Մուշեղյանի ժառանգության կարևորությունը՝ իրավամբ կարելի է պնդել, որ նա ժամանակակից դրամագիտության հիմնադիրն է Հայաստանում: Խ. Մուշեղյանն առաջինն էր Անդրկովկասում, որ առաջնահերթ համարեց գտածոների դերը ժամանակակից դրամագիտության զարգացման համար՝ չանտեսելով, սակայն, դրամների հավաքածոների ուսումնասիրության և հրատարակման կարևորությունը: Իր գործին անմնացորդ նվիրված գիտնականի՝ դրամագիտության բաժնի զեկավարման տարիներին /1956-1990/՝ ՀՀՊԹ դրամագիտության բաժինը հարստացավ բազմաթիվ դրամների մուտքով:

Խ. Մուշեղյանի թողած ժառանգությունն այսօր շարունակում է մնալ դրամագետների և պատմաբանների ուշադրության կենտրոնում: Թղթապանակներում ամփոփված բազմաթիվ նյութերը, որոնք տարիների ընթացքում կատարված մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունք են, գիտական շրջանակներին ներկայացվեցին արխիվի մանրազնին ուսումնասիրությամբ և հրապարակմամբ՝ ժամանակակից դրամագիտության պահանջներին համապատասխան: Մուշեղյանի անտիպ նյութերը՝ համապարփակությամբ, "Moneta" հրատարակչությունը հաջորդաբար հրատարակեց[7]: Հեղինակի այդ ուսումնասիրությունները կմնային թղթապանակների մեջ, եթե չգիտակցվեր դրանց տպագրման անհրաժեշտությունը, ինչը նաև նրա մեծագույն ցանկությունն էր: Սակայն մինչև

---

[7] Kh. Mousheghian (+), A.Mousheghian, G.Depeyrot, History and coin finds in Armenia, Antiquity, Wetteren, 2000, 184 pages, 23 plates:

Kh. Mousheghian (+),A. Mousheghian G. Depeyrot, C. Bresc, F. Gurnet, History and coin find in Armenia, coins from Duin, Capital of Armenia (4-13th c.), Inventory of Byzantine and Sasanian Coins in Armenia (6th-7th c.), Wetteren, 2000, 216 pages, 32 plates.

Kh. Moushegian (+), A.Mousheghian C.Bresc, G.Depeyrot, F.Gurnet. History and coin finds in Armenia; Coins from Ani (4th c. BC – 19th c. AD), Wetteren, 2000, 160 pages, 16 plates.

Kh. Moushegian (+), A.Mousheghian C.Bresc, G.Depeyrot, F.Gurnet, History and coin finds in Armenia; Coins From Garni(4th c. BC-19th c. AD), Wetteren, 2000, 120 pages, 8 plates.

Kh. Moushegian (+), A.Mousheghian C.Bresc, G.Depeyrot, F.Gurnet, History and coin finds in Armenia inventory of coins and hoards; (7-19th c.), Volume 1, Wetteren, 2001.

Kh. Moushegian (+), A.Mousheghian C.Bresc, G.Depeyrot, F.Gurnet, History and coin finds in Armenia inventory of coins and hoards; (7-19th c.), Volume 1, Wetteren, 2002.

կհրատարակվեին աշխատանքները. հարկավոր էր նյութերը վերծանել. կրկին ստուգել և շտկել: Կատարվեց քրտնաջան աշխատանք: Ստեղծվեց մասնագետների մի խումբ, որի նպատակն էր պահպանել գրամագետի կատարած հետազոտությունների հիմքը, առանց որի հնարավոր չէր պատկերացնել հրատարակումը: Աշխատանքը պսակվեց հաջողությամբ: Այդ գրքերի հրապարակումը բացեց և կշարունակի բացել նոր հորիզոններ ոչ միայն հայ, այլև օտարազգի պատմաբանների ու դրամագետների առջև, որոնք կկարողանան ճանաչել Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև ուշ միջնադար՝ նաև դրամագիտական նյութերի հիման վրա: Գիտնականի գրքերը ոչ միայն հեղինակի նվիրական ջանքերի արտացոլումն են՝ ի նպաստ հայագիտության, այլև նրա երախտիքի արտահայտությունն այն ուսուցիչների հանդեպ, որոնց շնորհիվ Սանկտ-Պետերբուրգում նա անցավ մասնագիտական դասական դպրոց: Նրա գրքերը հարստացնում և զարդարում են համաշխարհային խոշոր գրադարանները: Դրամագետը այսօր մեր կողքին չէ, բայց նրա աշխատությունները և ազնիվ կերպարը շարունակում են մնալ մեզ հետ:

Իբրև պատմաբան-դրամագետ՝ Խ. Մուշեղյանը իր հաստատուն տեղը նվաճեց համաշխարհային մեծությունների շարքում:

ԺՈՐԺ ԴԵՊԵՅՐՈ
Դրամագիտության պրոֆեսոր
Փարիզ